

ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԱՅԻՆ

ԵԶՆԻԿ ԵՊԻՄԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Դոկտոր Աստվածաբանության

ՆԱԽԱԾԵՐԵՆՑՅԱՆ ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԱՅԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

Հայագիտության մեջ ընդունված է խոսել Հայաստանի չորս ընդարձակ և մեկ համառոտ խմբագրությունների մասին՝ ըստ հետևյալ դասակարգման.

ա. Տեր Իսրայելի խմբագրություն¹, որի բնորոշիչ հատկանիշն այն է, որ սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում դեկտեմբերի 31-ով:

բ. Կիրակոս Արևելցու Ա (1252 թ.) և Բ (1269 թ.) խմբագրություններ², որոնց բնորոշ հատկանիշն այն է, որ սկսվում են նավասարդի 1-ով (օգոստոսի 11) և ավարտվում ավելյաց 5-ով (օգոստոսի 10):

գ. Գրիգոր Անավարզեցու խմբագրություն³, որի բնորոշ հատկանիշն այն է, որ ունի

¹ Այսուհետև ամսագրի համարներում հաջորդաբար կներկայացնենք Հայոց եկեղեցու անհամեմատ քիչ ուսումնասիրված ծիսական ժողովածուներից «Յայսմաուրք»-ին նվիրված եզմիկ եպիսկոպոս Պետրոսյանի հոդվածները, որոնք արդյունք են Սրբազան Հոր տարիների ուսումնասիրության (խմբ.):

¹ Մկրտիչ Վ. Ազգերան, Լիակարար վարք և վկայարանության սրբոց, Ցանկում, Վենեթիկ, 1814, էջ հզ-հն; Ն. Անոնյ Վ. Մ. Ալիշան, Հայապարտում, Վենեթիկ, 1901, էջ 107; Ն. Ներսես Ազիհեան, Նիսիսի հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիննետա, 1914, թ. է-Թ; Ցուցակ հայերև ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Ն. Ներսես Վ. Ազիհեան, Վիննետա, 1961, էջ 12; Ն. Անուայան, Հայոց անձնանունների բառարան, հր. Բ, Երևան, 1944, էջ 393; Ն. Ս. Անուայան, Հայկական մարտնչություն, Ե-ԺԸ դդ., հր. Ա, Երևան, 1959, էջ XXXIII, ծանոթ. 1; Մայիս Ավդալբեկյան, «Յայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմագրական արժևքը, Երևան, 1982, էջ 54-55; Նորայր արք. Պողարևան, Ծիսագիտություն, Նի Եորք, 1990, էջ 55-56; Արքաշես Մարտնոյան, Սևդա Մարարյան, Գրիգոր Մերնեց խլարեցի, Երևան, 2000, էջ 75-77:

² Մկրտիչ Վ. Ազգերան, ԼՎՎՍ, հր. ԺԱ, էջ հն-հզ; [Ն. Գարեգին Զարրիանայան], Պարմություն Հայ հին դարության (Դ-ԺԳ դդ.), Վենեթիկ, 1865, հր. Ա, էջ 604; Վենեթիկ, 1932, էջ 753-754; Ն. Անոնյ Վ. Մ. Ալիշան, Հայապարտում, էջ 472; Մաղարիա արք. Օրմանյան, Ազգապարտում, հր. Բ, Պլյուրո, 1960, էջ 1696; Ն. Ներսես Ազիհեան, Նիսիսի հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիննետա, 1914, թ. Ը; Ցուցակ հայերև ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Ն. Ներսես Վ. Ազիհեան, էջ 11-13:

Ն. Անուայան, Հայոց անձնանունների բառարան, հր. Բ, էջ 624-625; Ն. Ս. Անուայան, Հայկական մարտնչություն, էջ XXXIII, ծանոթ. 1; Մայիս Ավդալբեկյան, «Յայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմագրական արժևքը, էջ 67-79; Նորայր արք. Պողարևան, Ծիսագիտություն, էջ 56-57; Արքաշես Մարտնոյան, Սևդա Մարարյան, Գրիգոր Մերնեց խլարեցի, Երևան, 2000, էջ 76-77:

³ Ն. Անոնյ Վ. Մ. Ալիշան, Սիսուան, Վենեթիկ, 1885, էջ 241; գ; [Ն. Գարեգին Զարրիանայան], Պարմություն Հայ հին դարության (Դ-ԺԳ դդ.), հր. Ա, Վենեթիկ, 1932, էջ 774-775; Մաղարիա արք. Օրմանյան, Ազգապարտում, հր. Բ, էջ 1752-1753; Ն. Ներսես Ազիհեան, Նիսիսի հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիննետա, 1914, թ. Ը-Թ; Ն. Անուայան, Հայոց անձնանունների բառարան, հր. Ա, Երևան, 1942, էջ 586-587:

արևմտյան Եկեղեցիների տոնակարգերից զանազան նորամտություններ, սկսվում է սեպտեմբերի 1-ով, Ս. Ծննդյան տոնը դրված է դեկտեմբերի 25-ին, Տյառնընդատաշը՝ փետրվարի 2-ին, Ամենայն Սրբոց տոնը՝ նոյեմբերի 1-ին, և այլն:

դ. Գրիգոր Ծերեցի խմբագրություն⁴, սկսվում է անվասարդի 1-ով, ամենաձավալումն է և ամենատարածվածը: Միայն Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են 257 ամբողջական ձեռագիր օրինակներ, մինչ մնացյալ բոլոր խմբագրությունների ձեռագրերի ընդհանուր թիվը մույն Մատենադարանում՝ 18-ն է:

Համառոտ խմբագրությունը⁵ պահպանվել է միայն մեկ՝ 1319 թ. գրված ՄՄ 3658 ձեռագրով:

Չպետք է անտեսել նաև Երեսիա Չելչայի Քեօմիրճեանի (+1695) տաճկերեն համառոտ Հայսմավուրքը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Մատենադարանի (= Երուս.) թիվ 988 ինքնագիր ձեռագրում՝ գրված 1685 թ.:

Հայագիտության մեջ հիշվում են նաև լատինաձես⁶ Հայսմավուրքային օրինակներ:

Հ. Մկրտիչ Ազգերյանը⁷ և Հ. Ն. Ակիմյանը⁸ ցույց են տվել հունարենից կատարված մի թարգմանություն՝ ձեռամբ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու, 991/992 թթ.: Այն սկսվում է սեպտեմբերի 1-ով: Այդ թարգմանության մեզ ծանոթ միակ օրինակն է Վիեննայի Մխիթարյան Միաբանության Մատենադարանի (= Վիեննա) թիվ 1048 ձեռագիրը:

Իրականում Հայսմավուրքների խմբագրությունների հարցն այնքան էլ պարզ չէ և դեռ կարիք ունի տքնաջան ուսումնասիրության և բազմաթիվ ճշտումների:

Այս ուղղությամբ արված շուրջ հինգ տարիների մեր փնտրտուքների ամփոփումն է, որ ցանկանում ենք ներկայացնել սույն նյութով հետաքրքրվողներին՝ միաժամանակ շեշտելով, որ այս ընդամենը Նախածերենցյան Հայսմավուրքների ուսումնասիրության սկիզբն է:

Տեր Իսրայելի անունով երկու հայսմավուրքային հրատարակություն է եղել:

ա. Առաջինը տպագրվել է 1834 թ. Կ. Պոլսում, Գրիգոր դպիր Փեշտիմալչյանի աշխատար-

Ն. Գր. Սարգսևան, Գրիգոր կթղ. Անտարգևի մարկնագիր, Բազմավ.պ, 1949, մարտ-ապրիլ, էջ 55-66; Մայիս Ավդայրեզյան, «Յայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմագրական արժևքը, էջ 79-82; Նորայր արք. Պողարևան, Ծիսագիրություն, էջ 57-58; Արաբշև Մաթևոսյան, Սևդա Մարաբյան, Գրիգոր Ծերենց խմբագրի, Երևան, 2000, էջ 76:

⁴ Հ. Մկրտիչ Վ. Ազգերևան, ԼՎՎՍ, հր. ԺԱ, էջ. հի-ծ; Ն. Առևոյ Վ. Մ. Այիշան, Հայասպարում, էջ 560; Ն. Ներսես Ապիսևան, Նիսբեր հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914, թ. է, Ժ-ԺԱ; Ն. Անասյան, Հայոց անձնանունների բառարան, հր. Ա, էջ 609; Ն. Ս. Անասյան, Հայկական մարկնագիրություն, էջ XXXIII, ծանոթ. 1; Մայիս Ավդայրեզյան, «Յայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմագրական արժևքը, էջ 82 - 85; Նորայր արք. Պողարևան, Ծիսագիրություն, էջ 58-59; Արաբշև Մաթևոսյան, Սևդա Մարաբյան, Գրիգոր Ծերենց խմբագրի, Երևան, 2000, էջ 74 - 82:

⁵ Ն. Ա. Անասյան, Հայկական մարկնագիրություն, էջ XXXIII, ծանոթ. 1; Մայիս Ավդայրեզյան, «Յայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմագրական արժևքը, էջ 69:

⁶ Մ. Ավդայրեզյան, «Յայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմագրական արժևքը, (էջ 54, 73):

⁷ Հ. Մկրտիչ Վ. Ազգերևան, ԼՎՎՍ, հր. ԺԱ, էջ. հր-հզ:

⁸ Հ. Ն. Ապիսևան, Յովսեփ Կոստանդնուպոլսեցի թարգմանիչ Յայսմաուրքի, ՎՆՆԷՍ ԱՄՍՕՐԵՆՑ, 1957, յունուար-փետրուար, էջ 1-12:

տասիրությամբ:

Ինչպես ցույց են տվել Նիկողայոս Ադոնցը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Հ. Գր. Սարգսյանը և Հ. Ներսես Ակիմյանը⁹, այդ հրատարակությունը ոչ մի կապ չունի Տեր Իսրայելի Հայսմավորքի հետ. այն հիմնված է Գրիգոր Անավարզեցու խմբագրության վեներտիկի Ս. Ղազար վանքի ձեռագրատան (= վեմ.) թիվ 710 (1310-1320 թթ.) ձեռագրի վրա, բավականին շատ և ծավալուն կրճատումներով, հավելումներով և աղավաղումներով:

բ. Երկրորդ հրատարակությունը կատարել է G. Bayan-ը, ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ, 1910-1930 թթ. PO-ում¹⁰: Այս հրատարակության մեջ իբրև հիմնական մյուս դրված է Փարիզի Ազգային Գրադարանի (= Փարիզ) թիվ 180 (1316 թ.) ձեռագրի տեքստը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Կիրակոս Արևելցու Ա խմբագրությունը, իսկ միջանկյալ փակագծերի մեջ դրված են հոդվածներ 1834 թ. Կ. Պոլսյան հրատարակությունից:

Այսպիսով, այսքանից հետո, Տեր Իսրայելի խմբագրությունը մնում է անտիպ և չուսումնասիրված:

ՏԵՐ ԻՍՐԱՅԵԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՂԱԳՐԵՐ

Հ. Ներսես Ակիմյանը¹¹ հիշատակում է Տեր Իսրայելի Հայսմավորքի հետևյալ ձեռագրերը.

Վիեննա 7 (1439 թ.),

Վիեննա 219 (1591 թ.),

Վիեննա 228 (ԺՋ դ.),

Անկյուրայի Կարմիր վանք 157 (ԺԴ-ԺԵ դդ.),

Անկյուրայի Կարմիր վանք 158 (ԺԴ-ԺԵ դդ.):

Նորայր արք. Պողոթյանը¹² հիշատակում է Տեր Իսրայելի Հայսմավորքի հետևյալ ձեռագրերը.

Վեմ. 631 (1427 թ.),

ՄՄ 6283 (1437 թ.),

Էջմիածին 62 (1471 թ.),

Հալեպ 149 (ԺԵ-ԺԶ դդ.),

Ստամբուլ 10 (1579 թ.),

⁹ Նիկողայոս Ադոնցի 10 օգոստոս 1898 թ. նամակը Վենսիկից Նիկողայոս Մառնի, փոյ. ԼՐԱԲԵՐ, 1975, հմր 11, էջ 85; Գալուստ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ, Նայկականք, ԺԹ, ԱՐԱՐԱՏ, 1900, էջ 260; Հ. Գր. Սարգսյան, Գրիգոր կթղ. Անտարզեցի մարկենագիր, ԲԱԶՄԱՎԷՊ, 1949, մարտ-ապրիլ, էջ 55-66; Յուզակ հայերեն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Հ. ՆԵՐՍԵՍ Վ. ԱԿԻՆԵՄՆ, Վիեննա, 1961, էջ 12: ; Հ. Ներսես Ակիմյան, Նիսիսի հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914, թ. Թ:

¹⁰ Patrologia Orientalis, tomus Vicesimus Primus, Paris, 1930.

¹¹ Հ. Ներսես Ակիմյան, Նիսիսի հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914, թ. Ը:

¹² Նորայր արք. Պողոթյան, Ծիսագիրություն, Նիսիս, էջ 59:

Էջմիածին (1500-1511 թթ.),

ՄՄ 7365 (ԺԳ դ.):

Մայիս Ավդալբեգյանն իր «Յայսմաուրբ» ժողովածուները՝ աշխատության մեջ նը-
շում է. «Հատ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաց ցուցակի, Տեր Իսրայելի խմբա-
գրությանն են պատկանում 15 ձեռագիր՝ 1339, 2695, 4512, 4730, 4737, 4741, 4747, 4755,
4758, 4762, 4873, 6283, 7361, 7463, 7464: Նշված ձեռագրերի ուսումնասիրությունը որևէ
խմբագրության քնորոշ գիծ չի հայտարարում՝ բացի ծավալի չափավորությունից... Ծավա-
լից բացի, այս 15 ձեռագրերը մյուս խմբագրություններից տարբերակման այլ կոպան չեն
տալիս: Ավելին՝ նշվածներից մեկը՝ 7463 ձեռագիրը, որոշակիորեն կիրակոս Արևելցու
խմբագրությանն է պատկանում, ինչպես հավաստում է ձեռագրի մեջ պահպանված կի-
րակոսի հիշատակարանը,

7361-ը և 7464-ը լատինադավան Հայսմավուրբի հետքեր են կրում իրենց մեջ և ավելի
մոտ են Անավարզեցու խմբագրությանը,

մյուսներից 1339, 2895 (իմա 2695-ե. եպս. Պ.), 4512-ը ներդաշնակ են կիրակոսյան խմբ-
ագրության, մինչդեռ դուրս է մնացել 7365 ձեռագիրը, որ Տեր Իսրայելի խմբին է պատ-
կանում,

այնպես որ Տեր Իսրայելի անվան տակ գնացող ձեռագրերի այս խումբն ամբողջությ-
յամբ վերանայելի է և մեծ շտկումների կարոտ»¹³:

Ապասելի էր, որ այդ շտկումները պիտի արվեին Մ. Ավդալբեգյանի կողմից, սակայն
նրա աշխատության մեջ այս մասին ուրիշ ակնարկություն չկա:

Փորձենք վերանայել վերոհիշյալ ցանկերը և անել ամհրաժեշտ շտկումներ:

ա. Հ. Ներսես Ակիմյանի հիշատակած Վիեննա 7 և Վիեննա 219 ձեռագրերը նույն
գիտնականը հետագայում կարգում է կիրակոս Արևելցու ձեռագրերի շարքին, այնպես որ
ինչպես այս երկու, այնպես էլ Վիեննայի 228 ձեռագրի մասին կխոսենք կիրակոս Արևելցու
ձեռագրերը քննելիս:

բ. Հ. Ներսես Ակիմյանի հիշատակած Անկյուրայի Կարմիր վանքի 157 և 158 ձեռագրե-
րը կորել են Մեծ եղեռնի տարիներին, իսկ այդ ձեռագրերը նկարագրող Բարզեն եպս.
Կյուլենեթյանը չի տալիս դրանց բովանդակությունը¹⁴, այնպես որ որևէ հաստատում
դրանց խմբագրային պատկանելության մասին չենք կարող անել:

գ. Նորայր արք. Պողարյանի հիշատակած ՄՄ 7365-ը իրականում, ինչպես նկատել են
արդեն ՄՄ ձեռագրացուցակի կազմողները, մի ուրույն խմբագրություն պարունակող ձե-
ռագիր է և կապ չունի Տեր Իսրայելի Հայսմավուրբի հետ:

դ. Նորայր արք. Պողարյանի կողմից Էջմիածնի երկու ձեռագրերի հիշատակությունը
պարզ թյուրիմացություն է: Երկու դեպքում էլ խոսքը ՄՄ 1511 (1471 թ., Կուքի գյուղ) ձեռա-
գրի մասին է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Ծերենցի Հայսմավուրբի մի օրինակ, թեև պահպա-

¹³ Մ. Ավդալբեգյան, «Յայսմաուրբ» ժողովածուները և նրանց պարմագրական արմերը, էջ 54-55:

¹⁴ Բարզեն Աթոռակից կաթողիկոս, Յուզակ Ձեռագրաց Անկյուրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթի-
լիա, 1957, էջ 779-788:

ան է նաև Տեր Իսրայելի հիշատակարանը:

ե. Նորայր արք. Պողարյանի կողմից հիշատակված Հալեայի թիվ 149 ձեռագիրը, որքան որ թույլ է տալիս եզրակացնել Արտավազդ արք. Սյուրմենյանի նկարագրությունը¹⁵, կարող է լինել կիրակոս Արևելցու խմբագրությունների նախահիմքը:

զ. Նորայր արքեպ. Պողարյանի կողմից հիշատակված Ստանիսլավ 10 ձեռագիրը (1579 թ.) կորել է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այդ ձեռագրի մասին մենք կարող ենք տեղեկություններ քաղել միայն Հ. Ներսես վրդ. Ակիմյանի կողմից արված նկարագրությունից: Այն անվանվում է «Պատմութիւնք անատակութեան ճգնատրոսց և սրբոց մարտիրոսութեանց», ընդօրինակվել է 1579 թ. «Ի յաշխարհս ֆռանգաց, որք կոչին Իլիսք, ի թագաւորութեան Ստեփանոսի բարեպաշտ և երկիրաւ և խաղաղասէր թագաւորին, ի հայրապետութեան տէր Թադէոսի և ի արքեպիսկոպոսութեան յայսմ անհանգիս տէր Պարասիմ Պնտագոյ... ի քաղաքս Կամեհից, ընդ հովանեաւ սուրբ Աստածածնին և ի յար ոտն սքանչելագործող սուրբ հայրապետ Նիկողայոսի»:

Դժբախտաբար Հ. Ներսես վրդ. Ակիմյանը չի տալիս ձեռագրի բովանդակության մանրամասն նկարագրությունը, (հունվարի 1-ին դրված է «Տօն ութօրեայ թլիսատութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», Տյառնընդատաջի տոնը դրված է փետրվարի 2-ին)¹⁶, որով չենք կարող հստակ եզրակացության հանգել այդ ձեռագրի այս կամ այն խմբագրության պատկանելու վերաբերյալ:

է. ՄՄ 4755 (1457 թ.) ձեռագիրն իրականում Ծերենցի Հայսմավորքի օրինակ է: Հետաքրքրականն այն է, որ այն պարունակելով հանդերձ Ծերենցի Հայսմավորքը, պահպանել է նաև Տեր Իսրայելի հիշատակարանը¹⁷ (թ. 325բ), ինչը և, հավանաբար, շփոթության մեջ է գցել ինչպես ՄՄ Ձեռագրացուցակի կազմողներին, այնպես էլ Մայիս Ավդալբեգյանին (էջ 145-146):

ը. Գրիգոր Ծերենցի խմբագրության օրինակներ են նաև ՄՄ 4730 (ԺԶ դ.), ՄՄ 4747 (ԺԷ դ.), ՄՄ 4758 (ԺԷ դ.), և ՄՄ 4762 (1686 թ.) ձեռագրերը, որոնցից վերջին երեքը սկզբվում են սահմի 30-ից և ավարտվում Ավետման տոնով՝ ապրիլի 7-ով:

թ. Մ. Ավդալբեգյանի կողմից իբրև թե ճշտված ՄՄ 2695 ձեռագիրն իրականում տերիսրայելյան խմբի¹⁸ պատկանող ձեռագիր է և կապ չունի կիրակոսյան խմբագրության հետ: Նույն ձեռագրին հար և մնան է ՄՄ 4873-ը, որը սխալմամբ Մայիս Ավդալբեգյանի կողմից համարվել է Գրիգոր Անավարզեցու խմբագրության ձեռագիր¹⁹:

ժ. Մ. Ավդալբեգյանի կողմից իբրև թե ճշտված ՄՄ 4512 ձեռագիրը, արտաքինից մնան լինելով կիրակոսյան խմբագրության ձեռագրերին (սկսվում է նավասարդի 1-ով), իրակա-

¹⁵ Ցուցակ հայերեն ձեռագրաց Հայեայի Ս. Քառասուն մանկունք եկեղեցոյ և մասնաորոսաց, հր. Ա. Երուսաղէմ, 1935, էջ 280-290:

¹⁶ «Ցուցակ հայերեն Ձեռագրաց Լվովի համալսարանի, Արքեպիսկոպոսարանի և Սյունիսյալի» աշխարհության մեջ, Վիննա, 1961, էջ 53-54:

¹⁷ Տեր Իսրայելի հիշարակարանը պահպանել է նաև Ծերենցի խմբագրության ՄՄ 1511 (1471 թ.) ձեռագիրը:

¹⁸ Այս անվանումն օգտագործում ենք պայմանականորեն, այն բոլոր ձեռագիր Հայսմավորքների համար, որոնք սկսվում են հունվարի 1-ով:

¹⁹ Մ. Ավդալբեգյան, «Յայսմաւորք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, էջ 82:

նում ոչ մի կապ չունի այս խմբագրության հետ և բովանդակության առումով գրեթե նույնական է ՄՄ 2695 և ՄՄ 4873 ձեռագրերի հետ:

ժա. ՄՄ 4512 ձեռագրին ազգակից են նաև ՄՄ 4737 և ՄՄ 4741 ձեռագրերը:

ժբ. Մ. Ավդալբեգյանի կողմից ճշտված մյուս երկու՝ ՄՄ 1339 և ՄՄ 7463 ձեռագրերի վրա, իբրև կիրակոսյան²⁰ խմբագրության ձեռագրեր, պիտի ավելացնել նաև ՄՄ 7464 ձեռագիրը, որ Մ. Ավդալբեգյանի կողմից համարվել է լատինադարձված:

ժգ. ՄՄ 7361 ձեռագիրը, որ արտաքինից Տեր Իսրայելի խմբագրության տպավորություն է թողնում, քանի որ սկսվում է հունվարի 1-ից, իրականում պատկանում է Գրիգոր Անավարզեցու խմբագրության խմբին:

Հետևաբար, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակում Տեր Իսրայելի անվամբ հիշված 15 ձեռագրերից միայն ՄՄ 6283-ն է, որ պարունակում է Տեր Իսրայելի Հայսմավորքը:

Սույնին պիտի ավելացնել նաև Վենետիկի 631 (1427 թ.) ձեռագիրը:

Մինչ այժմ արված մեր փնտռումների արդյունքում միայն վերոհիշյալ երկու ձեռագրերն են, որ պահպանել են Տեր Իսրայելի խմբագրությունը: Երկու ձեռագրերն էլ հար և մահն են իրար, պահպանել են Տեր Իսրայելի հիշատակարանը, երկու ձեռագրերն էլ գրվել են նույն վայրում. «Յանապատու Տրապիզոնու, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս և սուրբ Յովանիսիս», տասը տարվա տարբերությամբ: Կա՛մ մեկը արտագրվել է մյուսից, կա՛մ երկուսն էլ՝ միևնույն ձեռագրից:

Ամփոփելով, ասենք, որ Տեր Իսրայելի խմբագրությանն են պատկանում միայն Վենետիկի 631 և ՄՄ 6283 ձեռագրերը:

ԿԻՐԱԿՈՍ ԱՐԵՎԵԼՑՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՂԱԳՐԵՐԸ

Հ. Ներսես Ակինյանը²¹ հիշում է Կիրակոս Արևելցու Հայսմավորքի հետևյալ ձեռագրերը.

Նիկոսիա 2 (1310 թ.),

Բեյրութի Կափուչիանների վանք 1 (1313 թ.),

Փարիզի Ազգային Գրադարան 180 (1316 թ.),

Վենետիկ 2 (1435 թ.) (պիտի լինի Գ),

Երուսաղեմ 75 (1439 թ.),

Վիեննա 7 (1439 թ.),

Ա. Քյուրքչյանի ի Կյումուշխանե,

Հովհ. Գրիգորյան Արծրունու (1441 թ.),

Վիեննա 219 (ԺԳ-ԺԴ դդ.):

²⁰ Այս անվանումն օգտագործում ենք պայմանականորեն, այն բոլոր ձեռագիր Հայսմավորքների համար, որոնք սկսվում են նավասարդի 1-ով:

²¹ Ծուցակ հայերև ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Ն. Ներսես Վ. Ակինեան, Վիեննա, 1961, էջ 13:

Նորայր արք. Պողարյանի²² ցանկում նշված են նաև հետևյալները.
Անթիլիաս 1 (1310-1311թթ.),
Երուսաղեմ 1822 (1316 թ.),
ՄՄ 3658 (1319 թ.):

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Ձեռագրացուցակում կիրակոս Արևելցու անվան ներքո դրված են հետևյալ Հայսմավուրք ձեռագրերը.

ՄՄ 3817 (1668 թ.),
ՄՄ 4683 (ԺԷ դ.),
ՄՄ 4684 (1407 թ.),
ՄՄ 7433 (1467 թ.),
ՄՄ 7529 (1326 թ.),
ՄՄ 7530 (ԺԳ դ.),
ՄՄ 9585 (ԺԴ դ., 1316-1335 թթ. միջև):

Այս ցանկի վերաբերյալ Մ. Ավդալբեգյանը փորձում է անել հետևյալ ճշտումները.
«...ձեռագրերի քննությունը պարզում է, որ դրանք ավելին են. հենց իբրև տերիստրալեյան
նշվածներից 7464, 4512, 1339 ձեռագրերը պատկանում են կիրակոսյան խմբին, նշվածներից
7529-ը որոշակի Գրիգոր Անավարզեցու խմբագրությանն է պատկանում... ցանկից
պետք է հանել նաև 3717 (պիտի լինի 3817 - Ե.Ե.Պ.) ձեռագիրը, քանի որ այն... մասն է
խլաթեցու Հայսմավուրքի: Որով կիրակոսի անվամբ պետք է մնան 7433, 7463, 9585, 7530,
4512, 1339 Հայսմավուրքները և 3658 ձեռագիրը, որը... ոչ այլ ինչ է, քան 4512 և 7463 կիրակոսյան Հայսմավուրքների ուղղակի համատոտումը»²³:

Հիմնվելով կիրակոս Արևելցու երկու տարբեր հիշատակարանների վրա, Մ. Ավդալբեգյանը խոսում է Արևելցու երկու խմբագրությունների մասին, որոնցից առաջինը աշխատասիրել է 1253 թ., որի մեջ կիրակոսն ավելացրել է 112 նոր նյութ, երկրորդը՝ «գրված Ստում 1269 թ., որտեղ խոսում է արդեն ավելացրած 170 նյութերի մասին»²⁴, թեև Բ խմբագրության որևէ ձեռագիր չի մատնանշում:

Այժմ փորձենք վերանայել վերոհիշյալ ցանկերը և անել անհրաժեշտ շտկումներ:

ա. կիրակոս Արևելցու Ա (1253 թ.) հիշատակարանը պահպանված է ՄՄ 7433 (1467 թ.) և ՄՄ 7463 (1413 թ.) ձեռագրերում:

Անվերապահորեն սույն խմբին են պատկանում նաև ՄՄ 1339, ՄՄ 7530 և Փարիզի 180 ձեռագրերը:

բ. կիրակոս Արևելցու Բ (1269 թ.) հիշատակարանը պահպանված է Նիկոսիայի 2, որ է այժմ Անթիլիասի թիվ 1 (1310 թ.), Բեյրութի Կափուչիանների վանքի 1 (1313 թ.), Վենետիկի Գ. (Չ) (1435 թ.), Երուսաղեմի 75 (1439 թ.) և 1822 (1316թ.) ձեռագրերում:

գ. ՄՄ 4683 ձեռագիրը Գրիգոր Անավարզեցու Հայսմավուրքի մի ամբողջական օրի-

²² Նորայր արք. Պողարյան, Ծիսագիտություն, Նյու Յորք, էջ 59:

²³ Մ. Ավդալբեգյան, անդ, էջ 69:

²⁴ Մ. Ավդալբեգյան, անդ, էջ 70:

նակ է:

դ. ՄՄ 4684 ձեռագիրը ներկայացնում է ուրույն մի խմբագրություն:

ե. Մի ուրույն խմբագրություն է ներկայացնում նաև Վիեննայի 7 (1439 թ.) ձեռագիրը, որի հիմքը Կիրակոս Արևելցու Հայսմավուրքը լինելով հանդերձ՝ սկսվում է հունվարի 1-ից, բազմաթիվ մոտ՝ հիմնականում ճառախոսական և ճգնակեցա-հայրախոսական հոդվածներ է պարունակում: Մի շարք սրբերի հիշատակման օրերն էլ տարբեր են Կիրակոս Արևելցու Հայսմավուրքի օրերից: Այս առանձնահատկությունները, սակայն, չեն արտահայտված ձեռագրի՝ Հ. Հակովբոս վ. Տաշյանի նկարագրության մեջ²⁵: Հավանաբար այդ է պատճառը, որ Հ. Ներսես Ակինյանն այն դատում է Կիրակոս Արևելցու խմբագրության ձեռագրերի շարքին:

զ. Վիեննայի 219 (1591թ.) ձեռագիրը նկարագրելիս Հ. Հակովբոս վ. Տաշյանը գրում է. «Մատենան է Յայսմաուրք, գրեթե ճիշտ մույն Թ. 7 ձեռագրին հետ կարգա ու բովանդակությամբ, միայն քիչ մը անելի համառոտ շատ մը մանր վարքեր են չունենալով»²⁶: Գրեթե նույնն է գրում նաև Վիեննայի 228 ձեռագրի մասին. «Մատենան է Յայսմաուրք... կը համընթանայ ընդհանրապես թ. 7 ձեռագրին՝ բայց անելի համառոտ է, շատ բան չունենալով»²⁷: Ինչպես նշեցինք արդեն, Վիեննայի 7 (1439 թ.) ձեռագիրը ներկայացնում է ուրույն մի խմբագրություն: Արդյո՞ք նույն խմբագրությանն են պատկանում նաև Վիեննայի 219 և 228 ձեռագրերը: Հ. Յակովբոս վ. Տաշյանի նկարագրությունը բավարար չէ ճշտելու դրանց խմբագրային պատկանելության հարցը:

է. ՄՄ 7529 և ՄՄ 9585 ձեռագրերը թեև զգալիորեն տարբերվում են միմյանցից, սակայն մոտ են ՄՄ 2695-ի ձեռագրախմբին՝ այն տարբերությամբ միայն, որ ծավալուն հոդվածները համառոտված են:

ը. ՄՄ 3817-ը, ինչպես ճիշտ նկատել է արդեն Մ. Ավդալբեգյանը, պատկանում է Ծերենցի խմբագրությանը:

թ. Նորայր արք. Պողարյանի հիշատակած ՄՄ 3658 ձեռագիրը իրականում համառոտ մի խմբագրություն է:

ժ. Առայժմ ոչինչ չենք կարող ասել Հ. Ներսես Ակինյանի հիշատակած Ա. Քյուրքչյանի Կյումուշխանն և Հովհ. Գրիգորյան Արծրունու (1441 թ.) ձեռագիր Հայսմավուրքների մասին:

ժա. Հալեպի 149 ձեռագիրը կարող է լինել Կիրակոս Արևելցու նախահիմք խմբագրությունը (սկսվում է Հունվարի 1-ից, Ավետյաց տոնը դրված է մարտի 25-ին, Տյառնընդատաշը՝ փետրվարի 2-ին): ԺԵ-ԺԶ դդ. գրված այս ձեռագրի մասին Արտավազդ արքեպիսկոպոսը գրում է. «...շատ գեշ պահում: Ծնորհի դիրակեր և յոռի թուղթին. հատորին մեկ չորրորդը վնասուած, վերին արտաքին շրթունքէն դէպի վեր ահագին և տգեղ խոռոչ մը բացուած... թէ սկիզբէն և թէ վերջէն խիստ բազմաթիւ թերթեր ինկած ու կորսուած են և երկու դար առաջ, բարի ձեռք մը ուզելով կորուստէ փրկել մնացածները, վերստին կազ-

²⁵ Յուրակ հայերև ձեռագրայ Մարևնադարանին Մխիթարևանց ի Վիեննա, հր. Ա. Վիեննա, 1895, էջ 24-51:

²⁶ Անդ, էջ 559:

²⁷ Անդ, էջ 587:

մած է, առանց ուշադրություն ընելու գլխակարգերում»²⁸: Ավելացնենք, որ բազմաթիվ էջեր ընկած են նաև միջին մասերից, ինչպես, օրինակ, փետրվար ժա-ից մարտ ժգ, մարտ իգ-լա հատվածները, և այլն:

Ամփոփելով, Հայ Եկեղեցու նախածերենցյան Հայտնավորք ձեռագրերը կարելի է սխառեմավորել ըստ հետևյալի.

Ա - Հովսեփ Կ. Պոլսեցու թարգմանությունը - (991-992 թթ.),
Վիեննա 1048 (1302 թ.):

Բ - Անանուն Ա խմբագրություն

ա. ենթախմբագրություն (սկ. հունվարի 1-ից),

ՄՄ 2695 (ԺԴ դ., մագաղաթ),

ՄՄ 4873 (1427 թ.),

բ. ենթախմբագրություն (սկ. նավասարդի 1-ից),

ՄՄ 4512 (ԺԵ դ.),

ՄՄ 4737 (1410 թ.),

ՄՄ 4741 (ԺԵ դ.),

գ. ենթախմբագրություն (սկ. նավասարդի 1-ից, համառոտ),

ՄՄ 7529 (1326 թ.),

ՄՄ 9585 (ԺԴ դ., 1316-1335 թթ. միջև):

Գ - Անանուն Բ խմբագրություն

ՄՄ 7365 (ԺԳ դ.):

Դ - Անանուն Գ խմբագրություն

ՄՄ 4684 (1407 թ.):

Ե - Տեր Իսրայելի (+1249) խմբագրություն - (ԺԳ դ. Ա կես)

Վենետիկ 631 (1427 թ.),

ՄՄ 6283 (1437 թ.):

Զ - Կիրակոս Արևելցու Ա խմբագրություն - (1252 թ.)

ՄՄ 7433 (1467 թ.),

ՄՄ 1339 (ԺԶ դ.),

ՄՄ 7463 (1413 թ.),

ՄՄ 7464 (1579 թ.),

ՄՄ 7530 (ԺԳ դ.),

²⁸ Ծուցակ հայերև ձեռագրաց Հայկաի Ա. Քառասուն մանկունք նկնդեցոյ և մասնաորաց, հր. Ա, Լք 280:

Փարիզ 180 (1316 թ.),
Հալեպ 149 (Նախաֆիմք?):

Է - Կիրակոս Արևելցու Բ խմբագրություն - (1269 թ.)
Նիկոսիայի 2, որ է այժմ Անթիլիասի թիվ 1 (1310 թ.),
Բելրութի Կափուչիաների վանք 1 (1313 թ.),
Վենետիկ Գ (Ջ) (1435 թ.),
Երուսաղեմ 75 (1439 թ.),
Երուսաղեմ 1822 (1316 թ.):

Ը - Անանուն Գ խմբագրություն (սկ. հունվարի 1-ից)
Վիեննա 7 (1439 թ.):

Թ - Գրիգոր Անավարզեցու խմբագրությունը (ԺԳ դ. վերջ, 1290-ական թթ.)
ՄՄ 7361 (ԺԷ դ.),
ՄՄ 4683 (ԺԷ դ.),
Վենետիկ 710 (1310 – 1320 թթ.),
Մորզան 622 (1348 թ.),
Վենետիկ 402 (1664-1691 թթ.):

Ժ - Համառոտ խմբագրություն
ՄՄ 3658 (1319 թ.):